Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

aravot daily
45/4141/ 13 մարտի 2012 երեքշաբթի
ISSN 1829-2224

Ա

## Առաքելությունն անիրագործելի է

Մոտ երկու տարի առաջ ես հարցրեցի ՆԱՏՕ-ի բարձրաստիճան ներկայացուցչին՝ ի վերջո որո՞նք են Աֆղանստանում վարած գրեթե 10-ամյա պատերազմի արդյունքները: Դուք հասե՞լ եք ձեր նպատակին՝ «Ալ-Քաիդա»-ն ոչնչացվա՞ծ է, թալիբները վերացվե՞լ են: Առաջին հարցին զրուցակիցս միանշանակ դրական պատասխանեց, երկրորդին, որոշ վերապահումներով՝ կրկին դրական: Այդ լավատեսական գնահատականը որոշակի հակասության մեջ է մտնում ամերիկացի ազդեցիկ սենատոր, հանրապետական Ջոն Մաքքեյնի գնահատականի հետ, ըստ որի՝ «եթե Աֆղանստանը կրկին հայտնվի քաոսային իրավիճակում, որում թալիբները կրկին առավելության կհասնեն, երկիրը դարձյալ հեշտությամբ կդառնա հենակետ՝ Միացյալ Նահանգների վրա հարձակման համար» (մեջբերումն ըստ «Ազատություն» ռադիոկայանի): Նման ձեւով Մաքքեյնը բացատրում է իր կարծիքը, թե ինչու կոալիցիայի զորքերը պետք է մնան Աֆղանստանում:

Խոսակցությունները այն մասին, որ ԱՄՆ եւ մնացած զորքերը պետք է դուրս գան Աֆղանստանից, թեժացան այն բանից հետո, երբ երկու օր առաջ հայտնի դարձավ, որ ամերիկացի մի սերժանտ, գիշերը լքելով իր զորամասը, մտել է աֆղանական մի գյուղ եւ անկանոն կրակ բացել խաղաղ բնակիչների վրա, որոնք քնած էին՝ սպանելով 16 հոգու, այդ թվում՝ 9 երեխաների: Այդպիսով, ի դեպ, հերքվում է մեր որոշ մեկնաբանների պնդումն այն մասին, թե խաղաղ քնած մարդկանց կարող է սպանել «միայն թուրքը»: Այս վերջին միջադեպը հիմք տվեց ԱՄՆ-ում մեկ այլ հանրապետականի՝ Ներկայացուցիչների պալատի նախկին խոսնակ Նյութ Գինգրիչին պնդելու, որ ամերիկացի զինծառայողներն Աֆղանստանում վտանգի են ենթարկում իրենց կյանքերը՝ «կատարելով մի առաքելություն, որն, ըստ էության, անիրագործելի է» (նույն աղբյուրի համաձայն):

2001 թվականի սեպտեմբերի 11-ին «Ալ-Քաիդայի» ահաբեկիչները Նյու Յորքում սպանեցին հազարավոր ամերիկացիների: «Պատասխան հարվածը» տեւում է 10 տարի, եւ այդ ընթացքում մահացել են եւս հազարավոր ամերիկացիներ: Շարունակել այդ պատերազմը՝ անիմաստ է (Նյութ Գինգրիչ), կասեցնել՝ հնարավոր չէ (Ջոն Մաքքեյն): Այդ փակուղուց դուրս գալու համար պետք է նախ հասկանալ, թե ինչու է մարդկությունն այս վիճակում հայտնվել: Գուցե իմ պատասխանը իդեալիստական հնչի, բայց ինձ թվում է՝ խնդիրն այն է, որ բոլորն իրենց հույսը դնում են բացառապես ուժի վրա: Այսպես ասած՝ պատվիրում են միայն բազկին: Չհասկանալով, որը ուժը ժամանակավոր եւ պատմականորեն չափազանց հարաբերական երեւույթ է, եւ ոչ մի Ջեյմս Բոնդ իրականում չի կարող խնդիր լուծել: Իսկ ահա ամերիկացի սերժանտը, որը, հավանաբար, իրեն Ջեյմս Բոնդ է պատկերացնում, կարող է խնդիրը էապես խճճել:

Պե՞տք է արդյոք ավելացնել, որ ներքին կյանքում նույնպես (նաեւ հայաստանյան) միայն ուժի վրա հիմնված առաքելությունն անիրագործելի է:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## Տասը տարվա ընթացքում Շիրակի մարզը ջայլամի միս կարտահանի



Հանրապետական պատգամավոր Աշոտ Աղաբաբյանը որոշել է այս անգամ վերընտրվելու դեպքում իր ընտրատարածքում՝ Ամասիայում ու Աշոցքում, ջայլամի գործ դնել: Այս մասին նա երեկ հայտնեց Գյումրու դրամատիկական թատրոնում՝ բուլղարացի լրագրող Ցվետանա Պասկալեւայի «Արցախի վերքերը» ֆիլմի ցուցադրումից հետո: «Շատ ծրագրեր կան իրականացնելու, եթե ծրագրերից խոսեմ, շատ երկար կլինի, բայց մենք մտածել ենք մի ծրագիր, որը որ, ասենք, հիմնականում սննդարդյունաբերության հետ է կապված, եւ դա չի լինի, ասենք, միայն իմ ընտրատարածքում, այլ ամբողջ Շիրակի մարզի մակարդակով: Իմ ընտրողներն արդեն գիտեն, որ դա կլինի ընտրություններից հետո, ոչ թե ընտրություններից առաջ: Ունենք մասնագետ, որն Աֆրիկայում է ապրել եւ ջայլամների հետ աշխատել է: Փորձում ենք հասկանալ, թե մի կովը եթե մի հորթ ա տալիս, ջայլամը 50 ձագ ա տալիս, եւ համարյա երկու տարվա մեջ նույն կովի քաշին է լինում միսը: Ըսենց ասեմ՝ ավելի լավ, ավելի էկոլոգիապես մաքուր, ինչի՞ չանցնենք էդ ծրագիրը, որը արդեն բավական լուրջ ժամանակ քննարկվել է, եւ ունենք նաեւ ինվեստորը, պատրաստվում ենք մայիսի վերջերին-հունիսի սկզբներին ջայլամի ծրագիրն անել, էկոլոգիապես մաքուր միս ա, ո՞նց են ասում՝ առանց խոլիստերինի, ինչի՞ չէ, բազմացման չափերն էնպիսին են, որ տասը տարվա ընթացքում երեւի Շիրակի մարզը միս կարտահանի՝ առանց մտածելու, նախ՝ Հայաստանին կպահովի, հետո կարտահանի»:

Ն. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Չիլինգարովը չափն անցել է

«Կարծում եմ՝ պարոն Չիլինգարովն այստեղ մի քիչ չափերն անցել է»,- ասաց Ռ. Մեհրաբյանը՝ «Առավոտի» խնդրանքով անդրադառնալով ՀՀԿ 13-րդ համագումարում «Եդինայա Ռոսիա» կուսակցության ներկայացուցիչ Արթուր Չիլինգարովի այն հայտարարությանը, թե ՌԴ նախագահի ընտրություններում Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը Վլադիմիր Պուտինի վստահված անձն էր, եւ ՌԴ քաղաքացի մեր հայրենակիցներն էլ 100 տոկոսով քվեարկել են Պուտինի օգտին: «Նման տվյալներ չկան, հակառակը՝ կան շատ տվյալներ, որ ռուսական ընդդիմադիր շարժման մեջ կան բազմաթիվ հայեր, ովքեր ոչ միայն Պուտինին ձայն չեն տվել, այլեւ հայհոյում են նրան եւ՝ հրապարակայնորեն»: Այնպես որ՝ Մեհրաբյանը փիլիսոփայորեն է վերաբերվում Չիլինգարովի հայտարարությանը:

Կարդացեք էջ **D**3:

### ՀՀԿ-ԲՀԿ կոնֆլիկտը գնալով սրվու՞մ է

Երեկ «Գոլդեն Թուլիփ» հյուրանոցում Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրեն Ռիչարդ Կիրակոսյանը հեգնախառն կատակով հայտարարեց, թե ինքը անդամագրվել է ԲՀԿ-ին: Aravot.am-ը պարոն Կիրակոսյանից հետաքրքրվեց, թե հեգնանքը վերաբերում էր Վարդան Օսկանյանի՞ն, որը վերջերս անդամագրվել է այդ կուսակցությանը, թե՞ ԲՀԿ-ին: Ռ. Կիրակոսյանն ի պատասխան նշեց, որ ԲՀԿ-ն դարձել է Ռոբերտ Քոչարյանի ճամբարը: Այն հարցին՝ արդյոք հնարավո՞ր է համարում 2013-ի նախագահական ընտրություններին Ռ. Քոչարյանի առաջադրումը, պարոն Կիրակոսյանը պատասխանեց. «Կասկածում եմ: Բայց մի բան միանշանակ է, որ կան մարդիկ, որոնք լոյալ են Քոչարյանի հանդեպ՝ անձնական շահերից ելնելով»: Ռ. Կիրակոսյանը հետաքրքրական համարեց այն, որ ՀՀԿ-ի կողմից անընդհատ հարձակումներ են լինում ԲՀԿ-ի վրա, սակայն պատասխանը այդպես էլ չի երեւում: Այնուհետեւ քաղաքագետը հավելեց. «Սակայն պարզ է, որ կոնֆլիկտը գնալով սրվում է»:

### Խաչատուր Սուքիասյանը պաշտոնապես առաջադրվեց

Քաղաքական գործիչ, ԱԺ նախկին պատգամավոր Խաչատուր Սուքիասյանն արդեն ստացել է Հայաստանում 5 տարի բնակության վերաբերյալ տեղեկանքը եւ մեծամասնական ընտրակարգով առաջադրման համար անհրաժեշտ փաստաթղթերը երեկ ներկայացրել է թիվ 10 ընտրատարածքային ընտրական հանձնաժողով:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Քննարկում

Այսօր, ժամը 12-ին, «Հայելի» ակումբի հյուրերն են ԱԺ պատգամավորներ Հովհաննես Սահակյանը եւ Լարիսա Ալավերդյանը:

### Եղանակ

Երեւան -4 +8, Շիրակ -13 +4, Կոտայք -13 +4, Գեղարքունիք -13 +4, Լոռի -9 +8, Տավուշ -4 +12, Արագածոտն լեռներ -13 +4, Արագածոտն նախալեռն. -6 +8, Արարատ -4 +9, Արմավիր -4 +9, Վայոց Ձոր լեռներ -13 +4, Վայոց Ձոր նախալեռն. -4 +9, Սյունիքի հովիտներ -2 +14

## «Քարանձավային մտածողությունը պետք է վերացնել»

«Կապ չունի, թե ՀՀԿ ցուցակը ով է ղեկավարում՝ նախագահը, թե ուրիշը: Դրանով ընտրակեղծիքները չեն պակասի: Հայաստանում չկա այնպիսի քաղաքական եւ բարոյական մթնոլորտ, որ մեկը, եթե ցուցակը ինքը չի ղեկավարում, այնտեղից բխի, որ իր ենթականերին ուղղակի հանձնարարություն չի հնչեցվելու, թե որ քաղաքական ուժի համար աշխատեն: Ակնհայտ է, որ իշխանական ամբողջ բուրգը, ամբողջ լծակներն աշխատելու են ՀՀԿ-ի համար»,- երեկ Քաղաքագետների միությունում լսումների ժամանակ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության նախագահ Խաչատուր Քոքոբելյանն առաջարկեց մյուս քաղաքական ուժերին, որ ՀՀԿ-ի ընտրակաշառքների դեմ պայքարեն միասնական շտաբով: Ըստ նրա՝ քանի որ ընդդիմությունը մեծ ռեսուրսներ չունի, պետք է համախմբվեն եւ մեծամասնական ընտրակարգում առաջադրեն միասնական թեկնածուի՝ հաղթելու համար:

Նկատելով, որ «Քաղաքագետների միության» նախագահին ակնհայտ համակրանք է տածում ԲՀԿ-ի նկատմամբ՝ Խաչատուր Քոքոբելյանն այդուհանդերձ վստահեցրեց, որ ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն մանդատի, այսպես ասած, աթոռի կռիվ են տալիս. «Երբեւիցե դուք տեսե՞լ եք ՀՀԿ-ի կամ ԲՀԿ-ի որեւիցե լուրջ գործչի բանավեճ, որը վերաբերվել է Հայաստանի զարգացմանը: Տեսել եք բանավեճ, թե քանի մանդատ՝ ես կողմից, քանի մանդատ՝ էն կողմից, որ տեղամասում ովքեր են առաջադրվում, պաշտպանում ենք այսինչ թեկնածուին, թե չենք պաշտպանում: Ես չեմ տեսել շահագրգռվածություն՝ իրենց դաշտ տանելու պրոֆեսիոնալների: Կոալիցիոն ուժերից յուրաքանչյուրը զբաղված է, չեմ ուզում վիրավորական խոսքեր ասել, բայց իր PR-ով, այսպես ասենք: «Բարգավաճը» փորձում է ցույց տալ, որ ինքը Ռուսաստանի թիվ 1 ներկայացուցիչն է, Հանրապետականը փորձում է ցույց տալ, որ չէ, կներես, բայց այդպես չի՝ ես եմ Ռուսաստանի ներկայացուցիչը: Այն մեկն ուզում է ցույց տալ, որ ինքը Ֆրանսիայի ներկայացուցիչն է, այն մեկը՝ Արեւմուտքի: Ինչ է նշանակում՝ Հայաստանի չինովնիկները իրենց պաշտոնների բարձրացումը կամ դիրքերի առավելությունը փորձեն գտնել այլ երկրներում եւ այնտեղից հովանավորչություն ստանան: Այդ ծառայամտությունը, այդ գավառամտությունը, քարանձավային մտածողությունը պետք է վերացնել»:

Aravot.am-ի դիտարկմանը, որ «Ազատ դեմոկրատներն» էլ կապվում է ամերիկյան ուժերի հետ՝ պարոն Քոքոբելյանը պատասխանեց. «Ո՞վ է կապում, դո՞ւք: Ժողովրդավարությունը եւ ազատականացումը, ճիշտ է, թափ է առել Եվրոպայում, Արեւմուտքում, արեւմտաարժեքային համակարգը կապում են ուղիղ միայն Ամերիկայի հետ՝ առանց պատկերացնելու, որ խոսք է գնում նաեւ Եվրոպայի մասին: Մենք գործ ունենք հանրության մի շերտի հետ, որտեղ փորձում են ձախողել կամ ձեւախեղել ցանկացած արժեհամակարգ»:

Հ. ՋԵԲԵՋՅԱՆ

## «Մի բան կա, որ գործող նախագահը քայլ առ քայլ լուծում է»

### Եվ դա, ըստ Լարիսա Ալավերդյանի, ինֆորմացիոն դաշտում որոշ հարցերի հստակ ինչեցումն է




ՀՀԿ 13-րդ համագումարում այդ կուսակցության ու նաեւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն իր ելույթում անդրադառնալով մասնավորապես արտաքին քաղաքական հիմնախնդիրներին ու մարտահրավերներին՝ հայտարարեց, թե «անհրաժեշտ է մշտապես ցուցաբերել սեփական նախաձեռնություն, որպեսզի չհայտնվես անընդհատ արձագանքողի դերում, այլ ինքդ էլ՝ որպես լիիրավ մասնակից, ներդրում ունենաս տարածաշրջանի եւ աշխարհի օրակարգի ձեւավորման գործում», եւ որպես օրինակ մատնանշեց Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունները կանոնակարգելու ՀՀ-ի նախաձեռնությունը: Այդ համատեքստում նա շեշտեց, որ թեեւ Հայաստան-Թուրքիա սահմանը դեռ մնում է փակ, բայց այդ նախաձեռնությունն «ամրապնդեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, երկրորդ՝ թույլ տվեց ամբողջ աշխարհին համոզվել, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերություններ հաստատելու միակ խոչընդոտը Անկարայում եւ մեկ այլ՝ իրեն մեջ զգող մայրաքաղաքում է, բայց ոչ Երեւանում, եւ, երրորդ՝ պարտադրեց Թուրքիային ստորագրել միջազգային փաստաթուղթ, որը բացառում է հարաբերություններ հաստատելու որեւէ նախապայման»:

Aravot.am-ի հետ զրույցում անդրադառնալով Սերժ Սարգսյանի հայտարարության այս հատվածին՝ ՀՅԴ ԳՄ անդամ եւ ՀՅԴ խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանն ասաց. «Քաղաքական հրապարակախոսության տեսակետից ՀՀԿ 13-րդ համագումարում հնչեցված ՀՀ նախագահի ելույթը հաջողված, տեղ-տեղ գրեթե գեղարվեստական պաթոսով մտածված տեքստ էր: Պատրաստ եմ ստորագրել այս ելույթի տասնյակ մտքերի տակ: Իսկապես՝ «Չի կարելի ստեղծել անձնական երջանկություն՝ կողոպտելով հանրությանը եւ ազգին: ... Սա երկիր է, որի պատմական ու մշակութային ժառանգությունը ուղղակի անգնահատելի է....», եւ էլի մտքեր: Բայց չեմ հավատում, կներեք չեմ հավատում: Չեմ հավատում, որովհետեւ անցնող հինգ տարիներին այսպիսի գեղեցիկ ձեւակերպումներ էլի եմ լսել, իսկ կյանքը շարունակվել է իր «հունով» գնալ: Ճիշտ այնպես, ինչպես չեմ հավատում, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունները կանոնակարգելու նախաձեռնությունը մեռն էր ու դեռ պապալվելուց հետո էլ, ըստ նախագահի տեսակետի, ամրապնդեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Մեղմ ասած՝ դա ոչ միայն չի համապատասխանում իրականությանը, այլեւ ճանաչման ուղղությամբ բազմաթիվ միջազգային գործընթացներ կասեցվեցին՝ Թուրքիայի հետ մեր լեզու գտնելու պատճառաբանությամբ: Եվ արդյոք այդքան հոգեմաշ ճանապա՞րհ պիտի անցնեինք՝ համոզվելու կամ ոմանցապացուցելու, որ Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ հարաբերություններ հաստատելու խոչընդոտները Անկարայում եւ Բաքվում են: Իսկ ինչո՞ւ չենք խոսում արձանագրությունների համատեքստով պայմանավորված՝ ներքին լարվածության կամ Հայաստան-Սփյուռք զգայուն հարաբերություններին հասցված վնասի մասին: Թանկ գին վճարեցինք, երբ կարելի էր պարզապես լսել այդ պահին քաղաքական գործընկերներին (նախեւառաջ մեզ՝ ՀՅԴ-ին) եւ տեսնել այն բոլոր՝ գրեթե անթաքույց ծուղակները, որ ներառված էին արձանագրություններում, ու այդքան համառորեն բարձրաձայնում էինք մենք: Հիմա էլ ցավով, ափսոսանքով ու նաեւ ամոթով եմ հիշում նախագահի սփյուռքյան այցը այս համատեքստում»:

Պատգամավորն ասաց, թե Սերժ Սարգսյանի՝ սկզբունքային եւ հաշվարկված արտաքին քաղաքական ուղեգծի մասին հաստատումն էլ ընկալում է «որպես համոզում-ցանկություն, որովհետեւ ձեռքբերումների մասին կդժվարանամ խոսել»: «Իսկապես, բազմաթիվ առիթներ ունեցել ենք արտաքին ամբիոններից լսելու ՀՀ նախագահի հաստատումը, որ ԼՂՀ խնդրի կարգավորման հիմքում Արցախի ինքնորոշման իրավունքն է: Բայց նույնքան համեստ կամ գրեթե անարդյունք ենք ընթացող բանակցություններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը որպես լիիրավ կողմ ներգրավելու ուղղությամբ: Այս հարցում մեր տեսակետները հիմնականում ներքին օգտագործման շրջանակներում են: Գոնե հանրությանը հայտնի փաստաթղթերում այն իր արտացոլումը չի գտել: Իսկ առհասարակ հավատը, ինչպես եւ սերը, քրիստոնեական ու համամարդկային բարձր արժեքներ են: Շատ պիտի ուզենայի, որ ՀՀ նախագահը հնարավորինս անկեղծ ու առանց մակիյաժի ներկայացներ իրականությունը եւ, ամենակարեւորը, իսկապես բավարար քաղաքական կամք դրսեւորվեր խոստումներն ու հայտարարված ճշմարտությունները իրականություն դարձնելու համար: Այլապես չհավատալու ռեսուրսը կարող է վտանգավոր դառնալ»,- հայտարարեց ՀՅԴ խմբակցության պատգամավոր Լիլիթ Գալստյանը:

Իսկ ահա «Ժառանգություն» խորհրդարանական խմբակցության քարտուղար Լարիսա Ալավերդյանն իր հերթին անդրադառնալով Սերժ Սարգսյանի ելույթին՝ շատ վտանգավոր համարեց հատկապես այն հատվածը, որտեղ վերջինս հայտարարեց, թե՝ «այսօր Հայաստանի եւ հայության դեմ աշխարհում ծավալված է լայնամասշտաբ քարոզչական պատերազմ: Այդ պատերազմը հատկապես կատաղի բնույթ է ստանում, երբ մենք հաջողություններ ենք ունենում տարբեր ոլորտներում, կամ զարգացումներ են արձանագրվում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ասպարեզում»: «Դա վերին աստիճանի վտանգավոր արտահայտություն է, եւ արդյոք դա չի՞ խոսում այն մասին, որ հայկական կողմը՝ նախեւառաջ Հայաստանը, չի կարողացել իր դիվանագիտական համակարգով՝ ի դեմս իր քաղաքական գործիչների, ճիշտ ներկայացնել թե Հայաստանը, թե Արցախը, չի կարողացել վերջինիս դարձնել միջազգային ամենատարբեր միջոցառումների մասնակից»,- ասաց տիկին Ալավերդյանը՝ հավելելով, թե երկրի նախագահը ավելի ինքնաքննադատաբար պետք է մոտենար այդ հարցադրումներին ու նաեւ պիտի շեշտեր, թե այդ առումով ի՞նչ նոր միջոցներով պետք է իր գլխավորած կուսակցությունը հանդես գա, ի՞նչ քայլեր պետք է ձեռնարկվեն գործած սխալները հաղթահարելու համար:

Նա նաեւ արձանագրեց. «Մի բան կա, որ գործող նախագահը քայլ առ քայլ լուծում է. դա ինֆորմացիոն դաշտում որոշ հարցերի հստակ ինչեցումն է: Խոսքը վերաբերում է թե Ադրբեջանում տեղի ունեցած հայերի ցեղասպանությանը, թե Ադրբեջանի կողմից տարածվող ապատեղեկատվությանը՝ մասնավորապես այն դեպքերի մասին, որոնք տեղի են ունեցել Աղդամի շրջապատում, որտեղ ադրբեջանական ուժերի կողմից սպանդ է եղել հենց ադրբեջանցիների նկատմամբ, եւ որը նրանք կոչում են «Խոջալուի դեպքեր»: Ես գովասանքի մեջ երբեք մլատ չեմ եղել. իրոք, դա արվում է, բայց արվում է վերջին երկու տարվա ընթացքում եւ ոչ թե կուսակցական, այլ պետական մակարդակով՝ նախագահին առընթեր Հասարակական կապերի եւ տեղեկատվական կենտրոնի միջոցով»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

## Սիրունյանը կառաջադրվի թիվ 4 ընտրատարածքում

Երեկ Aravot.am-ի հետ զրույցում «7-ի գործով» նախկին քաղբանտարկյալ Սուրեն Սիրունյանը տեղեկացրեց, որ վերջնականապես հստակեցրել է իր որոշումը՝ առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցության առումով: Սիրունյանը կառաջադրվի մեծամասնական ընտրակարգով, թիվ 4 ընտրատարածքում: Այն ընդգրկում է մայրաքաղաքի Արաբկիր համայնքի մի մասը: Սիրունյանի ընտրությունը պարզ բացատրություն ունի. «Դա այն տարածքն է, որտեղ ես բնակվում եմ»: Հիշեցնենք, որ թիվ 4 ընտրատարածքում մեծամասնական ընտրակարգով առաջադրվելու մասին հայտարարել է նաեւ ՀՀՇ վարչության նախագահ Արամ Մանուկյանը:

## ՀՀԿ-ն համարյա պատճենել է ՀՅԴ-ի կարգախոսը



«Փոխենք մեր կյանքը». Սա 2003-ին Դաշնակցության նախընտրական կարգախոսն էր, որին 2007-ին հաջորդեց «Մեր հին ընկերը դաշնակցությունն է» կարգախոսը: Հանրապետական կուսակցության նոր կարգախոսը քիչ է տարբերվում ՀՅԴ-ի՝ 2003-ի կարգախոսից, եւ դա արդեն նկատել են Դաշնակցությունում: ՀՅԴ խմբակցության պատգամավոր Արծվիկ Մինասյանը Aravot.am-ի հետ զրույցում նշեց, որ իրենց եւ Հանրապետականների կարգախոսի միջեւ իսկապես նմանություն կա. «Այլ բան, որ իրենց ասածներն ու արածները ոչնչով մեզ հետ չեն առնչվում, աղերս չունեն իրար հետ»:

Մեր հարցին, թե հաջողվա՞ծ է այն ՀՀԿ-ի համար՝ պարոն Մինասյանը պատասխանեց. «Միշտ էլ փոփոխությունը հաճելի է, հատկապես մեր երկրում, երբ ժողովրդավարական, սոցիալ-տնտեսական, քաղաքական մակարդակում լուրջ փոփոխությունների կարիք ու անհրաժեշտություն կա»:

Արծվիկ Մինասյանը դժվարացավ այլ մարդկանց անունից ասել՝ կհավատա՞ն ՀՀԿ-ին, որ փոխեն, բայց կոնկրետ իր կողմից ընդգծեց, որ «փոփոխվողը մինչեւ այս կփոփոխվեր, ժամանակ ունեին փոխվելու»:

Իսկ թե ինչ է լինելու ՀՅԴ-ի այս ընտրությունների կարգախոսը՝ ՀՅԴ Գերագույն մարմնի անդամ Սպարտակ Սեյրանյանն ասաց, որ մի քանի տարբերակների շուրջ մտածում են, վերջնական կկողմնորոշվեն ու կհայտնեն 2 օրից:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

# «Հնարավոր չէ պուտինիզմը պարանոցից կախված մտնել Եվրոպա»

## Քաղաքագետ Ռուբեն Մեհրաբյանը՝ «բարձրաշխարհիկ զրույցների», «հավատի» եւ «լավ» ընտրությունների մասին

«Հավատանք եւ փոխենք». ամենայն հավանականությամբ, առաջիկա խորհրդարանական ընտրություններում Հանրապետական կուսակցության կարգախոսը հենց սա է լինելու: Շաբաթ օրը մարզահամերգային համալիրում կայացած ՀՀԿ 13-րդ համագումարում ՀՀ եւ ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանն իր 50 րոպեանոց ելույթում քանիցս շեշտեց այդ արտահայտությունը: Քաղաքական եւ միջազգային հետազոտությունների հայկական կենտրոնի փորձագետ Ռուբեն Մեհրաբյանից «Առավոտը» հետաքրքրվեց՝ ՀՀԿ-ի անցած տարիների գործունեությունը հավատալու հնարավորություն ընձեռո՞ւմ է, որ ՀՀԿ-ն ակնկալում է հանրության հավատը՝ Հայաստանում ինչ-որ բան փոխելու համար: «Եթե ՀՀԿ-ի գործունեությունը հավատ ընձեռեր, ապա չորս տարվա կառավարումից հետո կրկին հավատալու եւ վստահելու կոչեր չէին արվի»,- ասաց մեր զրուցակիցը՝ հավելելով, որ խոսքն ի վերջո մի ելույթի մասին է, որն ունենում է երկրի բարձրագույն պաշտոնը զբաղեցնող մարդը եւ ոչ թե հոգեւոր առաջնորդը. «Հավատը քաղաքական կատեգորիա չէ: Ի վերջո, նաեւ պետք է բացատրվի՝ իսկ ինչո՞ւ պետք է ես հավատամ, ինչի՞ց ելնելով: Ես կարծում եմ՝ դրա հիմքերն այդքան էլ շատ չեն, եթե ուղղակի չասենք՝ իսկ ի՞նչ եք արել, որպեսզի քաղաքացին հավատա»: Սերժ Սարգսյանի բերած տնտեսական ծավալուն վիճակագրությունը քաղաքագետին չի գոհացրել. «Դա շատ վիճարկելի է, եւ ես կարծում եմ՝ ՀՀ նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը դրա հակահիմնավորումները լավագույնս բերեց (http://www.aravot.am/2012/03/10/47023/): Կոչ անելու մեջ ես հիմքեր չեմ տեսնում եւ չեմ հասկանում, թե ինչո՞ւ պետք է ունկնդրի մոտ արձագանք ունենա»:

Նախագահ Սերժ Սարգսյանն ընդամենը մեկ փոքրիկ տարբերությամբ անդրադարձավ առաջիկա խորհրդարանական ընտրություններին: Ասաց. «Մենք պետք է լավ ընտրություններ անցկացնենք՝ անկախ այն հանգամանքից, որ ոմանք այսօր ոչ թե ընտրությունների են պատրաստվում, այլ դրանք կեղծված ներկայացնելու տեխնիկական կարողություններ են զարգացնում: Գալիք խորհրդարանական ընտրություններում մենք մեր ժողովրդի դատին ենք ներկայանալու որպես անհատ համախոհների թիմ, որը նպատակադրվել է շահել ժողովրդի վստահության քվեն եւ ձեւավորել կառավարություն»: Նախագահի հնչեցրած այս տեսակետին Ռուբեն Մեհրաբյանը հակադարձում է. «Ընտրությունները լավը կամ ոչ լավը չեն լինում: Լավ կամ վատ լինում է խաշը: Ընտրությունները լինում են ազատ եւ ժողովրդավարական: Այ, եթե ասվեր, որ ընտրությունները կեղծողները խստագույնս կպատժվեն, եւ նախագահը, որպես Սահմանադրության երաշխավոր, արգելում է կեղծումները զուտ բարոյական կողմով, իսկ իրավական կողմից դա կանեն իրավապահները՝ այլ հարց: Այլապես ես չգիտեմ՝ ի՞նչ է նշանակում «լավ ընտրություն»: Ռուսաստանում էլ տեղի ունեցավ շատ լավ ընտրություն. հետո ի՞նչ: Եվ




նման «լավ ընտրությունները» լուրջ վերապահումներ են ունենում»:

Սերժ Սարգսյանը անդրադարձավ նաեւ Հանրապետականի հասցեին հնչող քննադատություններին. «Հանրապետականին պախարակելը ոմանք դարձրել են իբրեւ թե բարձրաշխարհիկ զրույցների հիմնական թեմա», եւ անցած հինգ տարիների ընթացքում իրենց մեղադրել են գրեթե ամեն ինչում: Մեղադրանքը, ենթադրաբար, ուղղված էր Հայ ազգային կոնգրեսին, քանի որ անցած հինգ տարիների ընթացքում հենց ՀԱԿ-ն է անողոքաբար քննադատել, պախարակել ՀՀԿ-ին: Ռուբեն Մեհրաբյանի համար ընկալելի չէ քննադատությունը «բարձրաշխարհիկ զրույց» որակելը. «Մարդիկ շատ կոնկրետ հարցադրումներ ունեն ՀՀԿ-ի հետ կապված, նրա հնգամյա խորհրդարանական մեծամասնության եւ նրա նախագահի չորսամյա կառավարման տարիների վերաբերյալ: Քաղաքացիներն ասում են այն, ինչը որ մտածում են, եւ դա ոչ բարձրաշխարհիկ է, ոչ էլ»: Մեր զրուցակիցն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ 2008 թվականից հետո, ի վերջո, Հայաստանի ներքաղաքական օրակարգը փաստացի չի փոխվել, եւ այն խնդիրները, որոնք եղել են ՀՀ-ի առջեւ դեռ այն ժամանակ, լուծում չեն գտել: Հանգամանքներ եւ իրավիճակներ են փոխվել եւ ներսում, եւ դրսում, բայց փաստացի մեր երկրում իրավիճակ չի փոխվել:

Ռուբեն Մեհրաբյանն ասում է, որ միայն ուրախ կլինի, եթե ճիշտ լինեն Սերժ Սարգսյանի ասածները «Ղարաբաղը ծախելու» եւ «ցեղասպանությունն ուրանալու» մասով: Հիշեցնենք, որ նախագահը դրանք որակեց «վայրենադատության իսկական խրախճանք»: Մեհրաբյանը նաեւ հավելեց. «Պարզապես այս ժամանակահատվածում, ես, համենայնդեպս, շտեսա քայլեր, որոնք ամրապնդում են Հայաստանի դիրքերն այդ ուղղություններով եւ «Ղարաբաղը ծախելը» կամ «ցեղասպանությունն ուրանալը» դարձնում են ավելի նվազ հավանական: Ես հեռու եմ այն մտքից, որ ՀՀԿ-ականներն դավաճաններ են եւ այլն, բայց այն, որ Հայաստանի ամրության պաշարը մեծացնելուն ուղղված քայլերը խիստ անբավարար են՝ փաստ է: Այսօր այնպես չէ, որ պետք է մերկացնել ընդդիմախոսների «խարդավանքները», փաստերին պետք է նայել»:

ՀՀԿ 13-րդ համագումարում ԵԺԿ նախագահ Ուիլֆրիդ Մարտենսը իր տեսաելույթում դիմելով ՀՀԿ-ականներին՝ համոզմունքն էր հայտնել, որ առաջիկա խորհրդարանական ընտրություններում ՀՀԿ-ն հաղթելու է. «Ես դրանում միանգամայն համոզված եմ: Եվ Դուք դա կանեք ոչ ամենեւին ձեզ համար եւ ոչ էլ ձեր կուսակցության: Դուք դա կանեք ձեր երկրի համար, քանի որ Հայաստանին անհրաժեշտ է, որ Հանրապետական կուսակցության բարեփոխումների քաղաքականությունը շարունակական լինի: Հայաստանը պետք է տեսնի, որ իր եվրոպական հորիզոնն ավելի ու ավելի է ընդլայնվում: Եվ ՀՀԿ-ն է այդ դինամիկայի շարժիչ ուժը, որն այդքան հույսեր է ներշնչում եւ նոր հեռանկարներ ընձեռում ձեր հրաշալի երկրի ու նրա երիտասարդության համար»: Ռուբեն Մեհրաբյանը Մարտենսի ելույթը գնահատում է՝ «միմիայն աշխարհաքաղաքական, եւ պետք չէ այնտեղ այլ բան փնտրել»: Իսկ որ Մարտենսը ասում է, թե ընտրություններում ՀՀԿ-ն հաղթող կհռչակվի, Մեհրաբյանի կարծիքով՝ խոսում է այն մասին, որ ԵԺԿ նախագահը հավանաբար շատ լավ ծանոթ է Հայաստանի ներկայիս ներքաղաքական կոնյունկտուրային. «Արտառոցն այն է, որ ընտրություններից երկու ամիս առաջ եվրոպացի մի գործիչ արդեն ասում է՝ ով կհաղթի, ով՝ ոչ: Սա կարող է մի քիչ տարակուսանք առաջացնել այլ քաղաքական ուժերի մոտ, բայց դրա պատճառը ոչ թե պարոն Մարտենսի էթիկայի պակասն էր, այլ հստակ աշխարհաքաղաքական դրդապատճառ կա: Դա ԵՄ-ի արտաքին քաղաքական նպատակներով է պայմանավորված: Նպատակներ, որոնք ուղղակիորեն առնչվում են նաեւ ՀՀ-ին, Հարավկովկասյան տարածաշրջանին»: ԵԺԿ եւ «Եդինայա Ռոսիայի» ներկայացուցիչների ներկայությունը ՀՀԿ համագումարում Մեհրաբյանն այսպես է բնութագրում. «Յուղն ու ջուրը իրար հետ չեն խառնվում: ՀՀԿ-ի եւ նրա կողմից ղեկավարած Հայաստանի երկկենցաղ վիճակը առայժմ կշարունակվի՝ մինչեւ կհստակեցվեն ՌԴ-ԵՄ հարաբերությունները եւ այդ ուժերի հարաբերակցությունը»: Կօգնի՞ այդ չկողմնորոշվածությունը ՀՀԿ-ին առաջիկա ընտրություններում, թե՞ կխանգարի. մեր զրուցակիցը կարծում է, որ դա առանձնապես մեծ ազդեցություն չի ունենա, քանի որ հայաստանյան ընտրողին այսօր բոլորովին այլ հարցեր են հետաքրքրում. «Ես կարծում եմ, որ դա հետագայում խնդիրներ կստեղծի: Հնարավոր չէ պուտինիզմը պարանոցից կախված մտնել Եվրոպա, եւ հակառակը՝ եթե մնում ես ռուսաստանյան ազդեցության գոտում, Եվրոպայի մասին խոսելը հենց այդ բարձրաշխարհիկ զրույցներն են»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

## Սեյրան Սարոյանն ա՞չք ունի Խաչատուրովի աթոռին

Aravot.am-ի ունեցած տեղեկություններով՝ գեներալ Սեյրան Սարոյանը կրկին որոշել է առաջադրվել մեծամասնական ընտրակարգով՝ թիվ 19 ընտրատարածքում: Այն ընդգրկում է Էջմիածին քաղաքը եւ հարակից գյուղերը: Նշենք, որ Սարոյանն այժմ պատգամավոր է հենց այդ ընտրատարածքից, որտեղ 2007-ին ՀՀԿ-ն պաշտոնապես սատարեց նրան՝ խաղից դուրս թողնելով ՀՀԿ-ական Հակոբ Հակոբյանին: Հակոբյանն արդեն իսկ հայտարարել է նույն ընտրատարածքում իր առաջադրման մասին: Իր մտերիմների շրջանակում Սեյրան Սարոյանն անկեղծացել է՝ ասելով, որ ԱԺ-ում իր լինելը մեկ նպատակ ունի. նա ցանկանում է զբաղեցնել ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնը, իսկ խորհրդարանից այդ պաշտոն, ըստ Սարոյանի, մեկ քայլ է: ՀՀ ԶՈՒ գլխավոր շտաբի պետի պաշտոնը ներկայումս զբաղեցնում է Յուրի Խաչատուրովը: Ասում են, որ գեներալն անգամ տարբեր ժամանակներում եւ տարբեր պատճառներով համակարգից հեռացված պաշտոնյաներին խոստացել է վերականգնել իրենց նախկին աշխատատեղերում, եթե վերջիններս իրենց աջակցությունը բերեն իր վերընտրության գործին:

Aravot.am-ը փորձեց այս տեղեկությունների վերաբերյալ պարոն Սարոյանի մեկնաբանությունները ստանալ: Մեր հեռախոսազանգին պատասխանած իր օգնականը տեղեկացրեց, որ նա զբաղված է եւ ազատ ժամանակ գտնելուն պես՝ կկապվի մեզ հետ: Օրվա ընթացքում Սարոյանն այդպես էլ չզանգահարեց:

Նկատենք, որ իր պատգամավորության չորս տարիների ընթացքում Սեյրան Սարոյանն օրենսդիր աշխատանքով այդպես էլ չզբաղվեց: Նա շարունակում էր ղեկավարել ՌԴ-ում գործող իր բիզնեսները:

Ն. Գ.

## «Ակնթարթային» վարկ՝ գրեթե առանց ծախսերի եւ առանց տեղեկանքների

### Զարգացման Հայկական Բանկի հաճախորդը վարկի տրամադրման որոշման մասին կտեղեկանա 1 օրվա ընթացքում



Զարգացման Հայկական Բանկի
Սպառողական վարկերի բաժնի ղեկավար
Մարտին Հովհաննիսյան

Հիմնական խնդիրը, որի հետ առնչվում են մարդիկ վարկ ստանալիս, պահանջվող փաստաթղթերի մեծ քանակությունն է եւ վարկի տրամադրման գործընթացի երկարատեւությունը: Ի թիվս այլ սպառողական վարկերի՝ Զարգացման Հայկական Բանկը մշակել է «Ակնթարթային» կոչվող սպառողական վարկատեսակը, որը չափազանց արագ է տրամադրվում՝ առանց ավելորդ ու լարված քաշքշուկի, եւ չի ստիպում հաճախորդին օրերով սպասել իր դիմումի պատասխանին: «Ակնթարթային» սպառողական վարկ տրամադրելու նախնական որոշումը Զարգացման Հայկական Բանկում կայացվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

«Ակնթարթային» սպառողական վարկատեսակն ունի նաեւ այլ առավելություններ՝ գրավադրվող անշարժ գույքի գնահատման ծախսեր չեն պահանջվում, գրավադրվող անշարժ գույքի ապահովագրում չի պահանջվում, դիմում-հայտի ուսումնասիրման վճար չի սահմանվում, վարկի վաղաժամկետ մարման տույժ չի գանձվում, տրամադրվում է առանց եկամուտների եւ վարկի նպատակի հիմնավորման: Վերջինս հատկապես գրավում է հաճախորդներին այն պատճառով, որ նրանք պարտադրված չեն լինում աշխատավայրից տեղեկանք ներկայացնել:

«Ակնթարթային» սպառողական վարկը տրամադրվում է համաձայն հաճախորդի դիմում-հայտի՝ նվազագույն փաստաթղթերի առկայությամբ, մասնավորապես՝ անձը հաստատող եւ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի: Վարկի նվազագույն չափը 500,000 ՀՀ դրամն է, առավելագույն չափը՝ 5 մլն ՀՀ դրամը: Կկարեւորեի նաեւ վարկերի տրամադրման ժամկետը. սպառողական վարկերի համար առավելագույն ժամկետ է սահմանվել 5 տարին:

Մենք առաջարկում ենք օգտվել «Ակնթարթային» վարկատեսակից եւ համոզվել, որ այն իսկապես ակնթարթային է:




«Զարգացման Հայկական Բանկ» ԲԲԸ
Մանրամասների համար՝
Տեղ. հեռախոս՝ 59 15 15
www.armdb.com
info@armdb.com

# Կադաստրի արխիվից փաստաթղթեր են անհետանում

## Քաղաքացի Գուրգեն Միրզոյանի կադաստրային գործի փաստաթղթերից մի մասն անհետացել է, մի մասի բովանդակությունն էլ փոփոխվել է ի վնաս նրա:

Տարիներ ի վեր կադաստրի հետ կապված խնդիրները քաղաքացիների համար գլխացավանք են առաջացրել: Այս գերատեսչությունը մարդկանց կադաստրային գործերը խճճել է՝ ինչպես իրեն ձեռնտու է եղել: Մի այդպիսի պատմության մեջ է հայտնվել քաղաքացի Գուրգեն Միրզոյանը: Չգիտես ինչու՝ կադաստրի արխիվից նրան պատկանող բնակարանի որոշ փաստաթղթեր ուղղակի անհետացել են, եւ ավելի ուշ Գուրգենը պարզել է, որ կադաստրային գործում այնպիսի թղթեր են հայտնվել, որոնք կեղծ են ու միանգամայն այլ բովանդակության: Այսօր քննչական մարմինը դեռ մի բան էլ Գուրգեն Միրզոյանին է մեղադրում կեղծիքի ու խարդախության մեջ: Բանն այն է, որ Արաբկիր վարչական շրջանի Հ. Էմինի 52 հասցեում գտնվող սեփական տունը, որը Գ. Միրզոյանը 1997 թ.-ին որպես նվիրատվություն է ստացել, կադաստրը 2007 թվականից սկսած՝ տարբեր պատճառաբանություններով չի գրանցում: Գ. Միրզոյանի խոսքերով՝ նվիրատվության ժամանակ տան մի մասնաբաժինը ստացել է եղբոր որդին: Հետագայում թե՛ տան եւ թե՛ հողամասի չափերը Գ. Միրզոյանն իր ուժերով ավելացրել է: 2006 թվականին էլ տան սեփականության վկայականում մասնաբաժիններով հստակ նշվել է, թե ում ինչքան տարածք է պատկանում: Կադաստրը նույնպես տվել է եզրակացություն, ըստ որի՝ գույքի 1/20-րդ մասը՝ մոտ 44 քմ-ն, պատկանում է եղբորորդուն. սա ամրագրվել է նաեւ դատարանի վճռով: Սակայն երբ օրերից մի օր եղբոր ընտանիքում տարաձայնություն է առաջացել, եւ Գուրգենի եղբոր կինը բաժանվել է, նա պահանջ է ներկայացրել իրեն հատկացնել արդեն ավելացված գույքի եւ հողամասի ուղիղ կեսը:

Բայց քանի որ ուժի մեջ մտած վճիռ կա, թե գույքի որքան հատվածն է օրենքով նրա որդուն պատկանում, եղբոր կնոջ պահանջը մերժվում է, ուստի, Գ. Միրզոյանի խոսքերով, իրենց նպատակին հասնելու համար իր նախկին հարսը կեղծիքի հիմքով դիմում է Արաբկիրի քննչական բաժին: 2008-ին տան սեփականության վկայականը, դատարանի վճիռը եւ կադաստրի արխիվային գործը քննչական բաժինն առգրավում է, գույքի վրա էլ կալանք է դրվում:




«Առավոտի» հետ զրույցում Գ. Միրզոյանը պատմեց, որ այստեղից էլ սկսվում է իր տան «խլոցիի» պատմությունը: Նրա խոսքերով. «Քննչական մարմնում իմ տան սեփականության վկայականն անհետանում է: Այն, որ վկայականը նրանց մոտ է, այդ մասին է վկայում նաեւ կադաստրի աշխատակցի՝ Նաիրա Մելիքյանի առգրավման արձանագրությունը, որտեղ պարզ գրված է, որ Ն. Մելիքյանն իրենց է հանձնել թե՛ կադաստրային գործը, թե՛ սեփականության վկայականը: Այդ ամենի նպատակն այն էր, որ վկայականն արանքից դուրս գա: Իսկ կադաստրից վերցրած միասնական տեղեկանքները, որոնք վկայում են մասնաբաժինների բաժանման մասին եւ բնեղենով գույքը առանձնացնելու կադաստրի եզրակացությունը, կադաստրում պատճառաբանել են, որ անուշադրության պատճառով վրիպակ է եղել, ընդ որում՝ 2-3 միասնական տեղեկանք կա»: Գ. Միրզոյանի խոսքերով՝ Արաբկիրի քննչականում առանց որեւէ լուրջ ապացույց ունենալու հայտարարել են, որ տան մասնաբաժինների հատվածը կեղծ է ավելացված. «Այդ փաստաթղթերը հանձնել են ձեռագրաբանական քննության՝ ՀՀ փորձագիտական կենտրոն ՊՈԱԿ-ում, որտեղից եկել է եզրակացություն, ըստ որի՝ իբր հնարավոր չէ պարզել՝ հետազոտելի ձեռագիր եւ թվագիր գրառումների պարզ կատարման, գրաֆիկական նյութերի խիստ սակավության պատճառով: Եվ քննիչը գործը կասեցրել է կեղծիք անողին գտնելու պատրվակով»:

Մինչդեռ Գ. Միրզոյանն ունի անկախ փորձագետի եզրակացություն, որը հաստատում է, որ վկայականում գոյություն ունեցող ձեռագիր տեքստը եւ նշված տեքստերում տեղադրված թվագիր գրառումները կատարված են միեւնույն անձի կողմից: Ըստ Գ. Միրզոյանի. «Այսինքն՝ քննիչը ՊՈԱԿ-ի ձեռագրաբանականի հիման վրա է որոշում, որ կեղծիք է տեղի ունեցել, կադաստրի աշխատակիցներն էլ խոստովանել են, որ անուշադրության վրիպակ է, ես չեմ կեղծել, եղբայրս չի կեղծել, կադաստրի աշխատակիցները չեն կեղծել եւ ման են գալիս կեղծիք անողին, որ գտնեն՝ գործը բացեն»:

Եվ քանի որ կեղծիքի մեղադրանքով գործը կարճվել է, եւ նույն հիմքով չէին կարող կրկին գործ հարուցել, կասեցված գործից մաս են առանձնացրել եւ ձեւակերպումը փոխելով, այս անգամ խարդախության հիմքով են գործ հարուցել: Ներկայումս գործը Արաբկիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների ընդհանուր իրավասության դատարանում է՝ դատավոր Արմեն Խաչատրյանի մոտ: Մարտի 5-ին տեղի ունեցած դատական նիստում դատավորը Գ. Միրզոյանի միջնորդությունը մերժել է, որով քաղաքացին խնդրել էր էլեկտրոնային արխիվը նույնպես ներգրավել՝ որպես իրեղեն ապացույց: Ըստ Գ. Միրզոյանի՝ դատավորը իր միջնորդությունը գտել էր ոչ նպատակահարմար: Մինչդեռ քաղաքացին պնդում է, որ կա տարբերություն կադաստրի ֆիզիկական եւ էլեկտրոնային արխիվների միջեւ: Բացի այդ, Գ. Միրզոյանը պատմում է, որ երբ քննիչը գործի որոշ նյութեր տրամադրել է իրեն՝ ծանոթանալու, պարզ է դարձել, որ որոշ նյութեր կեղծված են, այսինքն՝ միասնական տեղեկանքը, որը կադաստրը տրամադրել է Գ. Միրզոյանին, գործի նյութերի մեջ արդեն փոփոխված տարբերակով է եղել: Կադաստրի արխիվային գործում այդ տեղեկանքի բնօրինակը բացակայել է, չկա նաեւ քաղաքացու դիմումի բնօրինակը, որով դիմել է միասնական տեղեկանք ստանալու: «Բնօրինակի փոխարեն պատճենն է, որի մեջ ակնհայտ երեւում է տվյալների անհամապատասխանություն: 2007-ի օգոստոսի 23-ի միասնական տեղեկանքը նույն փաստաթուղթն է՝ տրված 2007-ի հոկտեմբերի 2-ին, պարզապես որոշակի տվյալներ ջնջել են եւ ուղղումներ են կատարել իրենց ձեռնտու ձեւով: Բացի ամսաթվից, ջնջված են նաեւ մասնաբաժինների մասին տվյալները, եւ փոփոխված է կադաստրային էջի համարը: Իսկ արխիվում առկա փաստաթուղթը, որտեղ ֆիքսված են մասնաբաժինների մասին տվյալները, կադաստրի աշխատակիցները քննիչին պատճառաբանել են, որ անուշադրության սխալ է եղել: Նույնը վերաբերում է քաղաքացու, այսինքն՝ իմ դիմումին. փոփոխված են ամսաթիվը, մուտքագրման ամսաթիվը, կադաստրային էջի համարը, եւ տեքստից ջնջված է մի ամբողջ նախադասություն»,- ասաց Գ. Միրզոյանը:

Հաջորդ նիստին, որը տեղի կունենա մարտի 14-ին, Գ. Միրզոյանը դատարանին է ներկայացնելու նաեւ այս ապացույցները, որոնք, ըստ նրա, ակնհայտորեն վկայում են ողջ գործի «սարքած» լինելու մասին:

ԼՈՒՍԻՆԵ ԲՈՒԴԱՂՅԱՆ

# Սոցիալական փաթեթը թերություններ ունի

## Ըստ Արա Բաբլոյանի՝ արդարացի չէ, որ բժշկական ապահովագրությունից հավաքարարներն ու պոլիկլինիկայի բժիշկները չեն օգտվելու

Տարվա սկզբին ներդրված բժշկական ապահովագրության փաթեթը, որից չեն կարող օգտվել, ասենք՝ հավաքարարները եւ մարդկանց որոշ խմբեր, դժգոհությունների ալիք է բարձրացրել: Երեկ «Առավոտը» ՀՀ Ազգային ժողովի առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Արա Բաբլոյանից հետաքրքրվեց, թե դա որքանո՞վ է արդարացի, որ նրանք չեն ընդգրկվում: Պարոն Բաբլոյանն ի պատասխան մեր հարցին՝ ասաց. «Արդարացի չէ: Դա կապված է հնարավորությունների հետ: Այն բժշկական հաստատությունը, որտեղ ես աշխատում եմ եւ գիտական ղեկավար եմ, սկսած հավաքարարից մինչեւ պրոֆեսոր ունեն մի մակարդակի ապահովագրություն: Դա մոտեցում է, որը ապագայում պետք է լինի բոլորիս համար: Ուրիշ բան, որ սոցիալական փաթեթի հնարավորությունը սահմանափակ է, պետք է ընտրվեր մարդկանց ինչ-որ մի քանակ: Ես վստահ եմ՝ գալիք տարի արդեն դպրոցները կշարունակեն լինել այդ փաթեթի մեջ, կընդգրկվեն այն աշխատակիցները, որոնք այս տարի չեն ընդգրկվել»: Արա Բաբլոյանը Տlaq ամսուլի ակումբում հրավիրված ասուլիսին խոստովանեց, որ սոցիալական փաթեթի ներկայիս ընդգրկվածությունը որոշ թերություններ ունի, սակայն պատգամավորը նաեւ վստահեցրեց, որ սա արդեն պրոգրեսիվ քայլ է, եւ այն կամաց-կամաց կզարգանա:

Ըստ պարոն Բաբլոյանի՝ այն մասնավոր ընկերությունները, որոնք իրենց աշխատակիցների համար կվճարեն բժշկական ապահովագրության համար, կազատվեն եկամտահարկից. «Եղած օրենքների մեջ կատարվեց փոփոխություն, ըստ որի՝ եթե գործատուն ամսական մինչեւ 10 հազար դրամ վճարում է իր աշխատակցի առողջությունն ապահովագրելու համար, ապա այդ սահմաններում՝ տարեկան 120 հազար դրամի, նա ազատվում է եկամտահարկի վճարումից: Սա մեծ առավելություն է, որ ապահովագրական ծառայություններն ու կամավոր ապահովագրությունը զարգանա»:

Նշենք, որ սոցիալական փաթեթը նախատեսված է քաղաքացիական եւ պետական ծառայողների, կրթության, մշակույթի եւ սոցիալական պաշտպանության ոլորտների մասնագիտական պաշտոններ զբաղեցնողների համար: Փաթեթը հնարավորություն է տալիս 120 հազար անձի օգտվել մատչելի բուժծառայությունից, մինչեւ 3 մլն 800 հազար դրամանոց սրտի վիրահատությունից: Լրագրողների այն հարցին, որ ուսուցիչների շրջանում արդեն դժգոհություն կա, որ նրանց ստիպում են կոնկրետ ապահովագրական ընկերություն ընտրել, Արա Բաբլոյանը վերհիշեց մամուլում հրապարակված այն մեղադրանքը, թե պարոն Բաբլոյանը ճնշում է գործադրում մարզպետների վրա, որպեսզի վերջիններս էլ ստիպեն իրենց ենթականերին ընտրել Բաբլոյանի հիմնած ապահովագրական ընկերությունը. «Միանգամից ասեմ, որ 97 թվին ես ստեղծել եմ ապահովագրական ընկերություն եւ այդ ժամանակ ես արդեն նախարար չէի եւ դեռ պատգամավոր էլ չէի: Այն միակն է Հայաստանում, որ ունի 41 բաժնետեր, այսինքն՝ ռեալ բաժնետիրական ընկերություն է: Ստեղծել եմ եւ որպես գաղափարախոսություն գտել եմ, որ դա անհրաժեշտ է, եւ պայքարել եմ, որ զարգանա: Լինելով պատգամավոր՝ ես աբսալյուտնը չեմ զբաղվում նրա կառավարմամբ եւ նույնիսկ բաժնետեր չեմ հանդիսանում: Ոչ մեկը իրավունք չունի ճնշելու մարզպետին, ոչ էլ մարզպետը իրավունք ունի ճնշելու որեւէ մեկին, կամ տնօրենը՝ ուսուցչին: Ամեն մարդ պետք է իր իրավունքն իմանա, եւ ինքը պետք է ընտրի իր ապահովագրական ընկերությունը: Շեղումներ կլինեն՝ առաջին տարին է»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

### «Արմավիան» ու «Զվարթնոցը» դեռեւս համաձայնության չեն գալիս

«Արմավիա» ավիաընկերության եւ «Զվարթնոց» օդանավակայանի ներկայացուցիչները երեկ կրկին հանդիպել են եւ քննարկել օդանավակայանի ծառայությունների սակագների իջեցման հարցը: Նշենք, որ մարտի 6-ին «Արմավիան» գործադուլ էր հայտարարել՝ օդանավակայանից պահանջելով իջեցնել ծառայությունների գները: «Առավոտի» հարցին, թե արդյոք կա՞ նորություն զիջումների մասով, ավիաընկերության մամուլի ծառայությունից վստահեցրին, որ առայժմ ոչինչ պարզ չէ, եւ դեռ բանակցությունները շարունակվում են:

Ինչ վերաբերում է ավիաընկերության չվերթներին, ապա «Արմավիայից» հայտնեցին, որ չվացուցակի ոչ մի շեղում չկա, եւ ինչպես որ սահմանված է, թռիչքներն իրականացվում են:

Գործադուլի արդյունքում մի քանի ժամով դադարեցվել էին թռիչքները, որոնք վերականգնվել էին քաղաքացիական ավիացիայի միջնորդությամբ կազմակերպված կողմերի հանդիպումից հետո: Այդ բանակցությունների արդյունքում 1 շաբաթով «զինադադար» էր կնքվել «Արմավիայի» եւ «Զվարթնոցի» միջեւ: Ավելի ուշ ավիաընկերության սեփականատեր Միխայել Բաղդասարովը հայտարարել էր, որ եթե օդանավակայանը ծառայությունների գները չիջեցնի, ընկերությունը ստիպված կլինի հայտարարել սնանկացման մասին:

Ն. Բ.

# Անհավասար մրցակցություն է



«Ժառանգություն» կուսակցության Վանաձորի ստորաբաժանման ղեկավար Գառնիկ Սահակյանի կարծիքով՝ ՀՀ-ում «Գնումների մասին» օրենքը փաստացի չի գործում:

Շուրջ 20 տարի Վանաձորում դեղերի բիզնեսով զբաղվող Սահակյանը, որը Վանաձորում գործող «Սզնի» դեղատան սեփականատերն է, ուշադրություն է հրավիրում օրենքի բացերի, նրանում առկա խոչընդոտների ու տնտեսական դաշտի մենաշնորհայնության վրա, որոնց արդյունքում փոքր ու միջին բիզնեսի ներկայացուցիչները, չդիմանալով խոշորների հետ անհավասար մրցակցային խաղի «վայրենի» պայքարին, դուրս են մղվում տնտեսական դաշտից:

«Դեղերի եւ բժշկական օգտագործման ապրանքների տեխնիկական պայմանների հարցում կոշտ սահմանափակումներ դնելով՝ վերացնում են մրցակցությունը. մատակարարման պահին պահանջում են 2/3 մնացորդային պիտանելիության ժամկետի առկայություն, ինչը կառավարությունը անհիմն է ընդունել, կամ տեխնիկական պայմաններում երկկոմպոնենտ եւ եռակոմպոնենտ ներարկիչների միջեւ սահմանափակում են դնում: Տեղական արտադրության լիդոկայինի 2%-անոց 2.0 մլ եւ թորած ջրի 2.0 մլ մ/մ ներարկման լուծիչների փոխարեն՝ 300% թանկ գներով 3.5 մլ լիդոկայինի 1%-անոց ամպուլային 700 դրամ են վճարում կամ պետբյուջեից ստացվող գումարները դեղերի թվաքանակի վրա են բաժանում, որպեսզի դեղի գնման գումարը չգերազանցի 1.0 միլիոն դրամը, եւ առանց մրցույթ անցկացնելու՝ ումից ուզում, ինչ գնով ուզում, այդ գնով էլ ձեռք են բերում պահանջվող դեղի խմբաքանակը»,- օրենքում առկա բացերն է վերհանում Գ. Սահակյանը:

Նա հիշում է, որ երբ Երեւանի «Շտապբուժօգնություն» ՓԲԸ-ն ներարկիչների մրցույթի հրավեր էր ուղարկել իրեն, տեխնիկական պայմաններում խիստ սահմանափակումներ մտցվեցին, ինչի պատճառով իր մասնակցությունը փաստացի անհնար դարձավ:

«Էքսկլյուզիվ իրավունքով «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն է միայն ներկրում երկկոմպոնենտ գերմանական «Բրաուն» ֆիրմայի արտադրության ներարկիչներ, որն էլ կրկնակի թանկ գներով է վաճառվում շուկայում, քան այլ գործարանների արտադրության ռետինե մխոցով եռակոմպոնենտ ներարկիչները, որոնք ունեն եւ Եվրամիության որակի սերտիֆիկատներ, եւ որակով են, եւ կրկնակի էժան: Փաստորեն, «Սզնի» ՍՊԸ-ն եւ մյուս դեղագործական ընկերությունները զրկվել են բուժհիմնարկների հայտարարած մրցույթին մասնակցելու եւ կրկնակի էժան գներով նրանց մատակարարելու իրավունքից»,- ասում է Գ. Սահակյանը:

Արդյունքում պետությունը, տարեկան մի քանի տասնյակ միլիոն ներարկիչներ գնելով եւ յուրաքանչյուրի համար տասը դրամ ավելի վճարելով, ըստ Սահակյանի, մի քանի հարյուր միլիոն դրամ չհիմնավորված ավելորդ ծախսեր է անում:

Նա ասում է, որ «Գնումների մասին» օրենքում այնպիսի միտումնավոր սողանցքներ են թողնվել, ինչի արդյունքում բյուջեն «լվացվում» է ահռելի չափերով. «Հենց այսօր ես պատրաստ եմ պետությանը միանգամից 6 հարյուր հազար հատ 2 մլ եւ 3 մլ ներարկիչներ մատակարարել՝ առավելագույնը 11 դրամ գնով, սակայն այդ շուկան փակ է՝ չնայած պետության հետ ունեմ պայմանագրեր, եւ բուժհաստատությունները պարտավոր են, համաձայն այդ պայմանագրերի, ինձ հրավեր ուղարկելու»:

Իսկ անցած տարվա դեկտեմբերի 30-ին Ոստիկանության տնտեսական վարչությունը «Սզնի» ՍՊԸ-ին հաղթող էր ճանաչել, սակայն հաջորդ աշխատանքային օրը՝ 2012թ. հունվարի 9-ին, գրավոր մերժել:

Չհուսահատվող Գառնիկ Սահակյանը դատական հայց է ներկայացրել ՀՀ ոստիկանության դեմ, իրավիճակից դուրս գալու ելքեր էլ է տեսնում:

«Պետական գնումների ժամանակ հաղթող ընկերությունից անհրաժեշտ է պահանջել դեղի ձեռքբերման գինը հավաստող փաստաթղթեր՝ հաշիվ-ապրանքագիր, ՀՀ մաքսային մարմինների կողմից տրված մաքսային հայտարարագիր, բացի այդ, պետության կողմից պետք է տրվի թույլատրելի խելամիտ շահույթի չափ, նորմա կամ մաքսիմում հավելագին՝ այդկերպ կխուսափենք նաեւ կոռուպցիոն ռիսկերից»,- օրենքում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունն է շեշտում նա:

Հակառակ դեպքում, եթե պետությունը հաշվի չնստի փոքր ու միջին բիզնեսի հարկատուի շահերի հետ, տնտեսական դաշտում առկա դեմպինգի պայմաններում փոքր ու միջին բիզնեսի շատ հարկատուներ կշարունակեն հեռանալ երկրից եւ բիզնես դնել թեկուզ հարեւան Վրաստանում:

ԱՆՈՒՇ ԲՈՒԼՂԱԴԱՐՅԱՆ
Վանաձոր

## Մեկնարկում է «SMS-մարաթոն»

«ԱրմենՏել» ընկերությունը հայտարարում է «SMS-մարաթոն» ծառայության մեկնարկի մասին՝ կանխավճարային համակարգի ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդների համար: Ծառայությունը հնարավորություն է ընձեռում ուղարկել կարճ հաղորդագրություններ Հայաստանի բոլոր բջջային ցանցերին՝ կես գնով, սկսած օրվա 3-րդ SMS-ից: Օրացուցային օրվա ընթացքում առաջին երկու SMS հաղորդագրությունները կտարիֆիկացվեն ըստ բաժանորդի գործող սակագնային փաթեթի: «SMS-մարաթոն» առաջարկը գործում է մինչեւ 2012թ. մայիսի 31-ը:

«Գարնանային ամիսները Հայաստանում լի են տոներով, եւ այս օրերին «ԱրմենՏել» ընկերությունն ուրախ է առաջարկել իր հաճախորդներին շփման նոր հնարավորություն՝ իրենց հարազատների եւ մտերիմների հետ: «SMS-մարաթոն» ծառայությունը մատչելի եւ հարմար շփման հնարավորություն է՝ պահանջված բոլորի կողմից, հատկապես տոն օրերին, երբ կտրուկ աճում է SMS ծառայությունների օգտագործումը»,- նշեց «ԱրմենՏել» ընկերության գլխավոր տնօրեն Իգոր Կլիմկոն:

«SMS-մարաթոն» ծառայությունը կարելի է ակտիվացնել նշված տարբերակներից մեկով. ուղարկելով «20» տեքստով SMS հաղորդագրություն 0674 համարին, զանգահարելով 067420 համարին կամ ուղարկելով *110*20# հրահանգը: Ծառայության միացման վարձը 150 դրամ է, բաժանորդային վարձը՝ օրը 5 դրամ: «SMS-մարաթոն» ծառայությունից կարող են օգտվել կանխավճարային համակարգի բոլոր սակագնային փաթեթների ֆիզիկական անձ հանդիսացող բաժանորդները, բացի «Շարժական ինտերնետ», «Ուլտրա», «Բարի գալուստ» եւ «ZrO» սակագնային փաթեթների բաժանորդներից:

## Մալաթիա-Սեբաստիայի որոշ հասցեներ կջրազրկվեն

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. մարտի 14-ին, ժամը 10.00-24.00-ը կդադարեցվի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Ծերենցի փողոցի 3, 5, 7, 7ա, Միքայելյան փողոցի 1, 3, Սեբաստիա փողոցի 78, 80, 82, 86, Ա. Մանուկյան փողոցի 2, 4, 6, 8, 10 շենքերի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը:

Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը՝ պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

# Հոգեւորականներ՝ բանակում



Անցյալ տարի անկախության հանդիսություններին զինվորականների շքերթին տեսանք նաեւ հոգեւորականների: Ոմանց համար դա անակնկալ էր, քանի որ մեր բանակն իր պատմության ընթացքում երբեք չի ունեցել հոգեւոր սպասավոր, չնայած՝ թե Ավարայրի ճակատամարտի, թե Սարդարապատի, թե Հայրենական մեծ պատերազմի ժամանակ մեր հոգեւորականները եղել են զենքը ձեռքներին, նաեւ եկեղեցու միջոցներով կազմավորել են ռազմական շարասյուներ:

1997թ. նոյեմբերի 13-ին Գարեգին Ա կաթողիկոսի եւ ՀՀ պաշտպանության նախկին նախարար Վազգեն Սարգսյանի համատեղ նախաձեռնությամբ հայ եկեղեցում ստեղծվեց ԶՈՒ առաջնորդություն: Բանակի հոգեւոր ծառայության առաջին պատասխանատուն էր տեր Վրթանես վարդապետ Աբրահամյանը: Ըստ պաշտպանության նախարարության, 2007թ. հոկտեմբերից ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդ է նշանակվել գերաշնորհ տեր Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանը: Բանակի հոգեւոր առաջնորդությունը զորամասերի գրադարանները համալրել է հոգեւոր գրականությամբ, բաժանվել են Աստվածաշունչ, «Էջմիածին» ամսագիր եւ Մայր աթոռ սուրբ Էջմիածնի «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, աղոթագրքեր: Կան զորամասեր, որտեղ կառուցվել են մատուռներ: Կառուցվելու են եկեղեցիներ, որոնց նախագծերը պատրաստ են: Ըստ պաշտոնական տեղեկատվության, ներկայումս 40 հոգեւորական է ծառայում ՀՀ ԶՈՒ հոգեւոր ծառայության կառույցներում:

Սեփ. լր.

## Օդաչուների կենսաթոշակների փողը կերել էին

ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում ավարտվել է թվով 6 նախկին օդաչու կենսաթոշակառուների թոշակի հաշվարկման եւ վճարման ընթացքում հայտնաբերված խախտումների մասով նախաքննությունը:

Ըստ ՀՀ գլխավոր դատախազության՝ 2009-2010թթ. ընթացքում կենսաթոշակների նշանակման վճարման գործընթացում արձանագրված չարաշահումների առիթով ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչությունում 2011թ. մայիսին հարուցվել էր քրեական գործ: Նախաքննությունը հանձնարարվել է ոստիկանության քննչական գլխավոր վարչությանը: Նախաքննության ընթացքում, ի թիվս այլ չարաշահումների, խախտումներ են հայտնաբերվել նաեւ նախկին օդաչուների կենսաթոշակների հաշվարկման եւ վճարման ընթացքում: Քրեական գործի նախաքննությամբ մասնավորապես պարզվել է, որ 2009թ. օգոստոսից մինչեւ 2010թ. փետրվարն ընկած ժամանակահատվածում ՀՀ ավիացիայի գլխավոր վարչության աշխատակից, այժմ հանգուցյալ Է. Միրզոյանի կազմակերպմամբ եւ նախկին բորտ-ուղեկցորդուհի Կ. Խալաթյանի միջնորդությամբ նախկին օդաչուներ Ա. Հակոբյանը, Մ. Եֆրեմյանը, Ա. Թունյանը, Տ. Սիմոնյանը, Ս. Հովհաննիսյանը եւ Ծ. Ասատրյանը Կ. Խալաթյանին տվել են ընդհանուր 16 800 ԱՄՆ դոլար գումար՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության «Դավիթաշեն» տարածքային բաժնի նախկին պետ Ս. Հակոբյանին եւ նույն բաժնի գլխավոր մասնագետ Գ. Վարդանյանին որպես կաշառք փոխանցելու համար:

Միջնորդության համար իր եւ Է. Միրզոյանի բաժնեմասը վերցնելուց հետո Կ. Խալաթյանը զգալի եւ խոշոր չափերով՝ ընդհանուր 7 600 ԱՄՆ դոլար կաշառքի գումարը փոխանցել է Ս. Հակոբյանին եւ Գ. Վարդանյանին՝ կենսաթոշակառուներ Ա. Հակոբյանի, Մ. Եֆրեմյանի, Ա. Թունյանի, Տ. Սիմոնյանի, Ս. Հովհաննիսյանի եւ Ծ. Ասատրյանի օգտին ակնհայտ ապօրինի գործողություններ կատարելու՝ պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող կենսաթոշակի գործերում եւ հաշվարկ-կարգադրություններում ակնհայտ կեղծ տեղեկություններ մտցնելու, իրենց գործողություններով հիշյալ կենսաթոշակառուներին տարբեր ժամանակահատվածներում խաբեությամբ թռիչքային գրքույկներում թռիչքային ժամերի հավելագրումների եղանակով ավել հաշվարկված ընդհանուր 7 855 650 դրամ խոշոր չափերի հասնող կենսաթոշակի գումարները ստանալուն եւ հափշտակելուն օժանդակելու դիմաց: Նախաքննության ընթացքում օդաչու-կենսաթոշակառուների կողմից հափշտակված կենսաթոշակների գումարներն ամբողջությամբ վերականգնվել են: Կենսաթոշակների նշանակման եւ վճարման գործընթացում հայտնաբերված մյուս խախտումների վերաբերյալ նախաքննությունը շարունակվում է:

# Տերտերյանի «Ննջող» պարտիտուրը ֆիլմ-բալետ կդառնա

## Ստեղծագործական խումբը համոզված է, որ հասունացել է «Ռիշարդ III»-ը մեծ էկրանին տեսնելու անհրաժեշտությունը

«Առավոտը» օրերս երաժշտագետ Նելլի Ավետիսյանի հետ մասնավոր զրույցում տեղեկացավ, որ ընթանում են Ավետ Տերտերյանի «Ռիշարդ III-ի մենախոսությունները» ֆիլմ- բալետի նախապատրաստական աշխատանքները: Ն. Ավետիսյանի խոսքերով. «Այսօր հասունացել է նոր բալետը նաեւ էկրանին տեսնելու անհրաժեշտությունը: Տերտերյանի «Ռիշարդ III» բալետը գրված է Շեքսպիրի ողբերգության հիման վրա: Երաժշտության սինթեզը ժամանակակից խորեոգրաֆիայի եւ կինոյի արտահայտչամիջոցների հետ, թույլ է տալիս օգտագործել տեխնիկական նոր հնարքներ, այդպիսով ստանալով գեղարվեստականորեն ամբողջական եւ ազդեցիկ մի գործ: Ֆիլմ-բալետի ստեղծման գաղափարը համահունչ է Տերտերյանի մտահղացմանը եւ փորձ է կյանքի կոչել կոմպոզիտորի արխիվում «Ննջող» պարտիտուրը: Վստահ եմ՝ ֆիլմ-բալետի ստեղծումը կդառնա վառ ստեղծագործություններից մեկը ոչ միայն մեր իրականության մեջ: Բարձրակարգ մասնագետների թիմ է ընտրված՝ կինոռեժիսոր Ռուբեն Քոչար, բալետմայստեր Ռուդոլֆ Խառատյան, դիրիժոր Ռուբեն Ասատրյան, նկարիչ Վահրամ Հարությունյան»:

Կոմպոզիտորի որդուց՝ երաժշտագետ Ռուբեն Տերտերյանից հետաքրքրվեցինք՝ ինչո՞ւ այս բալետը ժամանակին տեղ չի գտել Ազգային օպերային թատրոնի խաղացանկում: «Հայրս հրաժարվեց այս ստեղծագործության բեմադրությունից՝ չգտնելով իր գաղափարների ամբողջական մարմնավորումը բեմի վրա: Նա միշտ փայփայել է ֆիլմի շնորհիվ դրանց իրացման երազանքը: Բալետի երաժշտությունը հատվածաբար 1980թ. ձայնագրվել է Հայաստանի ռադիոյի եւ հեռուստատեսության սիմֆոնիկ նվագախմբի կողմից: Գտնում եմ, որ կոմպոզիտորի իսկական ժառանգության կարեւորագույն մի մասն է «Ռիշարդ III»-ը, որը պահպանման, հանրահռչակման կարիք ունի»,- ասաց մեր զրուցակիցը:



«Ռիշարդ III» ֆիլմ-բալետի ստեղծագործական խումբը:

Բալետմայստերի, դիրիժորի, նկարչի ընտրությունը սպասելի էր, Ռ. Տերտերյանից հետաքրքրվեցինք՝ ի՞նչ չափանիշներով է ընտրվել ֆիլմի ռեժիսորը: «Ռուբեն Քոչարի ինքնատիպ եւ խոհափիլիսոփայական հայացքն աշխարհին, նրա ստեղծագործական հետաքրքիր մեկնաբանումները կարող են արգասաբեր լինել տերտերյանական մտահղացումներն ամբողջությամբ եւ ճշգրիտ մատուցելու համար»,- նշեց Ռուբեն Տերտերյանը: Նա հավելեց, որ Ռուբեն Քոչարը «Լիլիթ» ֆիլմ-բալետի համար 1988թ. Ռիգայում կայացած ավանգարդ ֆիլմերի «Արսենալ» փառատոնում արժանացել է գլխավոր մրցանակի, իսկ 1995թ. «Հուշեր» ֆիլմ-բալետը West Holliwood փառատոնի շրջանակներում ընդգրկվել է 10 լավագույնների ցանկում:

Ռուդոլֆ Խառատյանն էլ «Ռիշարդ III»-ի կատակցությամբ մեզ փոխանցեց. «Այս բալետի առանձնահատկությունն այն է, որ այն «մաքուր» բալետ չէ՝ ավանդական, դասական տիպի խորեոգրաֆիկ ներկայացում: Այստեղ օրգանապես միահյուսված են երաժշտական խորեոգրաֆիկ, օպերային, օրատորիալ ժանրերին դրամատիկ ու ստվերների թատրոնին, կինոյին, մնջախաղին բնորոշ էլեմենտներ: Այս ամենը միավորում է պահելի բարդ դրամատուրգիան»:

Ռուբեն Ասատրյանի խոսքերով. «1979 թվականին ստեղծված Տերտերյանի «Ռիշարդ III»-ը այսօր եւ առաջիկա տասնամյակներում եւս կընկալվի որպես խորը փիլիսոփայական արժեքների բյուրեղացում»:

Նկարիչ Վահրամ Հարությունյանը, տերտերյանական այս գործը բնորոշելով իբրեւ տիեզերական, կարծում է, որ այն այնպես պետք է ձեւավորել, որ առկա լինեն արվեստի բոլոր ձեւերը՝ դասականից սկսած, վերջացրած բոլոր հայտնի եւ անհայտ իզմերի սինթեզով:

Անդրադառնալով ֆիլմ-բալետին՝ Ռուբեն Տերտերյանը նշեց, որ պլանավորված է նկարահանումներն անցկացնել այս տարվա օգոստոս-հոկտեմբեր ամիսներին, իսկ մոնտաժային եւ հետարտադրական փուլը՝ նոյեմբերից: «Ակնկալում ենք Հայաստանի ազգային կինոկենտրոնի աջակցությունը»,- նշեց պարոն Տերտերյանը:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Ապագա լրագրողներին ընտրում են անհասկանալի չափանիշներով

Ներկայումս սնկի պես աճում են լրագրողներ «պատրաստող» դպրոցները, լրագրության ֆակուլտետները զանազան բուհերում: Հայտնի չէ, թե ինչ չափանիշներով են ընտրվում այն անձինք, ովքեր պետք է հետագայում դառնան լրագրողներ, կամ ինչ ուսումնական պլաններով են նրանց դասավանդում: Անցյալ տարի ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ընդունելության քննությունների համակարգում տեղի ունեցավ փոփոխություն: Հայոց լեզու եւ գրականություն, անգլերեն քննությունները դուրս եկան եւ ներմուծվեց բանավոր հաղորդակցության մշակույթ քննությունը: Վերջինս առաջացրել է բազում դիմորդների դժգոհությունը: Նրանց մեծամասնությունը տեղյակ չէ, թե ինչ հարցերի շուրջ պետք է պատրաստված լինի, կամ ինչ չափանիշներով է գնահատվելու այդ քննությունը: «Առավոտը» ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկան Նաղաշ Մարտիրոսյանից հետաքրքրվեց՝ այս տարի ուղեցույց կիրատարակվի՞, որը կօգնի դիմորդներին: Դեկանը պատասխանեց, որ երեւի այս տարի չհասցնեն դա անել, մյուս կողմից էլ՝ նշեց, որ թերեւս դրա անհրաժեշտությունը չկա, քանի որ ուղեցույցի գոյությունը դիմորդներին կդնի կաղապարների մեջ: Իսկ այն հարցին՝ ի՞նչ ասել է բանավոր հաղորդակցության մշակույթ եւ ի՞նչ չափանիշներով են դիմորդները գնահատվելու, պարոն Մարտիրոսյանն այսպես պատասխանեց. «Քննության նպատակն է ճշտել դիմորդի բանավոր խոսքի կուլտուրան, բառապաշարը, ասելիքը տրամաբանորեն եւ գրագետ արտահայտելու կարողությունը, ճանաչողական ունակությունը ընտրած մասնագիտության վերաբերյալ»: Ն. Մարտիրոսյանը դիմորդներին «լուսավորեց»՝ ներկայացնելով մի քանի հարց, որոնք հնարավոր է՝ ընդգրկված լինեն հարցաշարում. «Ձեզ հայտնի լրագրողները. լրագրողի մասնագիտությանը բնորոշ առանձնահատկությունները ձեր պատկերացմամբ», «Հարցազրույց պետք է վարեք Շուշիի ազատագրմանը մասնակցած անձի հետ: Ինչպե՞ս կնախապատրաստվեք հարցազրույցին, ի՞նչ հարցեր կուղղեք նրան», «Ներկայացրեք ձեզ ծանոթ երիտասարդական պարբերականները: Ո՞ր թեմաներն են ձեզ հետաքրքրում, կցանկանայի՞ք խմբագրել նման ամսագիր եւ ինչո՞ւ»: Ժուռնալիստիկայի ֆակուլտետի դեկանը նաեւ տեղեկացրեց, որ իրենք յուրաքանչյուր ամսվա 2-րդ ուրբաթ օրը հանդիպում են դիմորդներին եւ նրանց նախապատրաստում քննությանը, խորհուրդներ տալիս:

«Առավոտը» փորձեց պարզել, թե այլ բուհերում ինչպե՞ս են ընտրում ապագա լրագրողներին: Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարանում լեզվաբանության եւ միջմշակութային հաղորդակցության ֆակուլտետում 1-ին կուրսի 2-րդ կիսամյակից ուսանողները կարող են մի շարք այլ մասնագիտությունների շարքում ընտրել լրագրությունը: «Առավոտը» ֆակուլտետի դեկան Հարություն Ճանճապանյանից հետաքրքրվեց՝ արդյո՞ք ճիշտ է առանց որեւէ մասնագիտական քննության կամ առանց դիմորդի մասնագիտական կարողություններին ծանոթանալու, հնարավորություն տալ ընտրել լրագրողի մասնագիտությունը: Պարոն Ճանճապանյանը պատասխանեց. «Մեր բուհում գործում է նաեւ միջազգային լրագրության կենտրոնը, որը ապագա դիմորդների հետ որոշակի աշխատանքներ է տանում: Նրանք ուսանողներին մեկ կիսամյակի ընթացքում բացատրում են մասնագիտության էությունը, ուսանողները դասախոսություններ են լսում. այսինքն՝ կողմնորոշվելու համար 3-4 ամիս ունենում են»:

Մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետում գործում է հեռուստառադիոլրագրության ամբիոն, որը զբաղվում է ապագա լրագրողների ընտրությամբ եւ պատրաստմամբ: «Առավոտը» ամբիոնի վարիչ Արմեն Ամիրյանից հետաքրքրվեց՝ ի՞նչ սկզբունքներով եւ քննություններով են ընտրում ապագա լրագրողներին: Նա պատասխանեց. «Հայոց լեզվի միասնական քննության արդյունքը դիմորդները բերում են դպրոցից, եւ կախված նրանից, թե որ ոլորտն են ընտրում, հանձնում են ռադիո եւ հեռուստալրագրություն առարկայից բանավոր եւ գրավոր քննություն: Այս քննությունների միջոցով փորձում ենք ստուգել դիմորդի ընդհանուր պատրաստվածության մակարդակը, որքանով է տեղյակ ոլորտից, ուշադրություն ենք դարձնում հայերենի իմացությանը»:

ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## 115 զանգահեր տղա կմասնակցի չարենցյան քայլերթին

Այսօր Եղիշե Չարենցի ծննդյան 115-րդ տարեդարձն է: Ինչպես Aravot.am-ի հետ զրույցում երեկ հայտնեց բանաստեղծի տուն-թանգարանի տնօրեն Լիլիթ Հակոբյանը, առավոտյան 11:30-ին թանգարանի մոտից քայլերթ կսկսվի դեպի Չարենցի հուշահամալիր: Ի նշան բանաստեղծի հոբելյանի, առջեւից կքայլեն 115 զանգահեր տղաներ՝ ձեռքերին մեխակներ: Անգերեզման Չարենցը երազել է, որ «գալիքի զանգահեր տղան» մի օր ծաղիկներ դնի իր գերեզմանին: Հոբելյանական թափորը ողջ ճանապարհին չարենցյան տողերով թերթիկներ կբաժանի անցորդներին: Չարենցի հուշահամալիրի մոտ արդեն կինչի Տիգրան Մանսուրյանի հիմնը՝ գրված պոետի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծության հիման վրա: Ելույթ կունենան անվանի մտավորականներ, Չարենցի ժառանգներից՝ Արմեն Չարենցը, Չարենցի անվան դպրոցի աշակերտներ եւ ԵՊՀ ուսանողներ:

Լիլիթ Հակոբյանը հայտնեց, որ նույն օրը կազդարարվի չարենցյան տարվա մեկնարկի մասին: 2012-ին կազմակերպվելիք իրենց բոլոր միջոցառումները կլինեն չարենցյան «Օ, գրքերի աշխարհը տիեզերք է անեզր» կարգախոսի ներքո ու Երեւանի՝ գրքի մայրաքաղաք հայտարարվելու համատեքստում:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Նոր ներկայացում՝ «Հարսնացուն Անգլիայից»

Օրերս ՀՀ ճարտարապետների տանը կայացավ «Շանս» թատերական կենտրոնի ուժերով բեմադրված «Հարսնացուն Անգլիայից» երաժշտական կոմեդիայի պրեմիերան: Ներկայացումը պատմում է մի աղջկա մասին, ով Հայաստան է եկել Անգլիայից եւ ուզում է ամուսնանալ գյուղացի տղայի հետ: Այդպիսի դեպքեր քիչ են լինում, ուղղակի ռեժիսոր եւ դերասան Արմեն Դալլաքյանը փորձել է այսկերպ դերասան-հանդիսատես տարածությունը կոտրելով՝ անմիջականություն ստեղծել ու երիտասարդ դերասաններին ազատություն ընձեռել: Նա ասաց, որ սցենարի հեղինակն ինքն է, նյութն էլ հորինված է՝ հարմարեցված հայկական իրականությանը: «Երբ հանդիսատեսը սկսում է ծափահարել, զգում եմ՝ անկե՞ղծ էր, թե՞ ոչ: Եվ երբ իսկապես վաստակած ծափահարություններ են հնչում, ասես մի մեծ բեռ ընկնում է ուսերիցս»,- խոստովանում է ռեժիսորը: Ներկայացման մեջ ներգրավված են



«Շանս» թատերական կենտրոնի սաներ Էդգար Ղուկասյանը, Մելանյա Նիկողոսյանը, Վանուհի Մխիթարյանը, Արգամ Բաղդասարյանը եւ ուրիշներ: Գլխավոր դերերից մեկը խաղացող Էդգար Ղուկասյանը նշում է. «Հանդիսատեսը հիմնականում կենտրոնանում է գլխավոր հերոսի վրա, որը պարտավոր է խաղալ բնական, եւ այնպես անել, որ իրեն հետեւողների աչքերին արցունք հայտնվի, դեմքին ժպիտ, հիացմունք ու զարմանք…»:

Մելանյա Նիկողոսյանի կարծիքով էլ. «Կապ չունի՝ դու գլխավո՞ր դեր ես խաղում, թե՞ երկրորդական, կարեւորը համոզիչ լինելն է, հուզելը»: Վանուհի Մխիթարյանն էլ ասում է, որ թատրոնում խաղալը գերադասում է կինոյից. «Թատրոնի պարագայում հանդիսատեսի արձագանքը տեղում զգում ես, եւ հետո թատրոնում չկա սխալվելու իրավունք, իսկ կինոյում ցանկացած կտոր կարելի է նորից նկարել, ինչն ինձ համար արդեն հետաքրքիր չէ»: «Ես այս ներկայացմանը պատրաստվելիս շատ ջանք եմ թափել՝ բոլոր առումներով: Լինելով երիտասարդ աղջիկ՝ մարմնավորել եմ 80-ամյա կնոջ, ինչը այդքան էլ հեշտ չէ»,- հավելում է Վանուհին:

ԱՆԺԵԼԱ ՇԱՀՈՒՄՅԱՆ

VivaCell MTS

ԵՂԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# ՀԱՕԿ-ի պարզաբանումը՝ իր եւ ՀՖՖ-ի կնքած պայմանագրերի միջեւ հակասության շուրջ

Մի քանի օր առաջ Ռուբեն Հայրապետյանի հրավիրած մամուլի ասուլիսում «Առավոտը» ՀՖՖ նախագահին խնդրել էր մեկնաբանել ՀԱՕԿ-«Forward» եւ ՀՖՖ-«Adidas» ստորագրված պայմանագրերի միջեւ եղած հակասությունը: Առաջինի պարագայում ՀԱՕԿ-ը պարտավորություն է ստանձնել, որ այսուհետեւ ՄՕԿ-ի հովանու ներքո անցկացվող մրցումներում մեր մարզիկները կրելու են ռուսական արտադրանքի արտադրության մարզագեստը, իսկ երկրորդի դեպքում՝ մեր ֆուտբոլային հավաքականների պաշտոնական համազգեստը «Adisas»-ն է լինելու:

Հարցադրումը տեղին էր եւ իսկապես իրավաբանական լուծում կամ հիմնավոր մեկնաբանություն էր պահանջում, քանի դեռ ՄՕԿ-ի ու ՖԻՖԱ-ի միջնորդությունների ժամանակ «Forward»-ը կամ «Adidas»-ը իրենց պայմանագրերի պահանջները խախտելու մեջ մեղադրանքներ չեն ներկայացրել: Այսօր խնդրո առարկայի վերաբերյալ ՀԱՕԿ-ը տարածել է հետեւյալ պաշտոնական հայտարարությունը:

«Որոշ լրատվամիջոցներ մեկնաբանել են ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանի վերջերս արած հայտարարությունը, թե ՀԱՕԿ-ը իրավունք չուներ առանց ֆուտբոլի ֆեդերացիային տեղյակ պահելու պայմանագիր կնքել ռուսաստանյան արտադրանքի «Forward» ընկերության հետ:

Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեն պաշտոնապես հայտարարում է, որ առանց ՀԱՕԿ-ի հաստատման, մարզաձեւերի հանրապետական ֆեդերացիաները (ՀՖՖ-ն նույնպես) չեն կարող մասնակցել օլիմպիական խաղերի: Ավելին, ՀԱՕԿ-ը բացառիկ իրավունք ունի՝ ներկայացնել հանրապետությունը օլիմպիական խաղերում, ՄՕԿ-ի կողմից հովանավորված տարածքային, մայրցամաքային եւ համաշխարհային համալիր մրցումներում: Օլիմպիական շարժման եւ բարձրագույն նվաճումների՝ սպորտի զարգացման հարցերում ՀԱՕԿ-ը համարվում է հասարակական մարզական կազմակերպությունների աշխատանքները: ՄՕԿ-ի խարտիայով (4-րդ գլուխ, կետ 29) պետք է ազգային ֆեդերացիաները ճանաչված լինեն ազգային օլիմպիական կոմիտեի կողմից եւ անդամակցեն նրան: ՀԱՕԿ-ը նաեւ իրավունք ունի ՄՕԿ-ի կողմից ճանաչված միջազգային մարզական ֆեդերացիաներից հետ կանչել ՀԱՕԿ-ի կողմից երաշխավորված ազգային ֆեդերացիաներին:

Անդրադառնալով վերը նշված պայմանագրին՝ ասենք, որ այն գործելու է մինչեւ 2014թ. դեկտեմբերի 31-ը:




Ամեն բանից անկախ, օլիմպիական խաղերի մրցասպարեզներում մասնակիցները, նրանց թվում՝ հայաստանցիները, հանդես են գալիս մասնագիտական գույքով եւ հանդերձանքով: Մեր պարագայում, ասենք՝ լոնդոնյան հրաձգարանում, Նորայր Բախտամյանը չի կրակելու «Forward»-ի զենքով եւ չի կրելու այդ ապրանքանիշի հանդերձանքը: Նույնը վերաբերում է մեր ծանրորդին, մարմնամարզիկին, ըմբիշին, մյուսներին: Ասել կուզենք, որ օլիմպիական խաղերում ֆուտբոլիստը նույնպես խաղադաշտում չի կրելու «Forward»-ի խաղակոշիկ, մարզաշապիկ եւ այլն: Փոխարենը մրցաբեմից դուրս, ամենուրեք (օլիմպիական ավանում, պատվո պատվանդանի վրա, զբոսանքի, նախավարժանքի ժամանակ եւ այլուր) մեր պատվիրակները պարտավոր են հագնել, կրել այն ամենը, ինչը նրանց կհատկացնի ՄՕԿ-ի հետ համագործակցող, ՄՕԿ-ի օրենքներով աշխատող ՀԱՕԿ-ը: Հակառակ պարագայում, նույնիսկ աննշան խախտումների դեպքում, «Forward»-ը տուգանքներ կներկայացնի մեր ազգային օլիմպիական կոմիտեին:

Ուզում ենք, որ վերելք ապրող հայրենական ֆուտբոլը կարողանա նվաճել նաեւ օլիմպիական խաղերի մասնակցության ուղեգիր: Այդ անելը ավանդույթներով հարուստ հայկական ֆուտբոլում հնարավոր է, իսկ պայմանագրերը արգելք չեն հանդիսանա: Ընդհանրապես մարզական կազմակերպությունների ղեկավարները չեն կարող իմանալ ու հիշել գործող բոլոր օրենքները: Թերեւս, նման հարցերում ղեկավարությանը պետք է օգնի տվյալ հիմնարկի իրավաբանը: Այս դեպքում զերծ կմնանք անհիմն, ապակողմնորոշող հայտարարություններից»:

ԱՇՈՏ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՀՖՖ պատասխանը՝ ՀԱՕԿ-ի պարզաբանմանը

Անդրադառնալով ՀԱՕԿ-ի լրատվության բաժնի տարածած հաղորդագրությանը՝ կապված Հայաստանի ֆուտբոլային օլիմպիական ընտրանու ենթադրվող մարզահագուստի մասին ՀՖՖ նախագահ Ռուբեն Հայրապետյանի վերջին մամուլի ասուլիսում արտահայտած մտքի հետ, ՀՖՖ մամուլի քարտուղարութունը տեղեկացնում է. «Բոլորովին պարտադիր չէ, որ Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտեի ղեկավարները տեղյակ լինեն, թե երբ, ինչ պարագայում, ինչ ցիկլերով է Հայաստանի ֆուտբոլային ընտրանին ընդգրկվում օլիմպիական մրցապայքարում: Առավել եւս պարտադիր չէ, որ տեղյակ լինեն, թե Հայաստանի ֆուտբոլային որ հավաքականը կարող է հավակնել օլիմպիական մրցապայքարում հանդես գալուն: Եվ ամենակարեւորը՝ ընդհանրապես պարտադիր չէ, որ տեղյակ լինեն Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքական թիմերի մարզահագուստ կրելու պայմաններին եւ պայմանագրային պարտավորություններին: Մանավանդ, որ Հայաստանի ֆուտբոլային ընտրանիները քանիցս ընդգրկվել են օլիմպիական ցիկլերում եւ մասնակցել են ընտրական հանդիպումներին, իսկ ՀԱՕԿ-ում դրանից երբեք տեղյակ չեն եղել: Թերեւս լավ կլինի, որ այս խնդիրներից տեղյակ լինեն ՀԱՕԿ-ի տարատեսակ աշխատակիցները, որպեսզի դրա արդյունքում տեղյակ լինեն նաեւ ՀԱՕԿ-ի ղեկավարները: Ինչ խոսք, անչափ շնորհակալ ենք, որ ՀԱՕԿ-ը ցանկանում է, որպեսզի, վերելք ապրող հայրենական ֆուտբոլը կարողանա նվաճել օլիմպիական խաղերի մասնակցության ուղեգիր: Իսկ մինչ ՀԱՕԿ-ում կուսումնասիրեն ՖԻՖԱ-ի եւ ՈւԵՖԱ-ի՝ ֆուտբոլը կանոնակարգող հազարավոր փաստաթղթերը, միջազգային այդ հեղինակավոր կառույցների անդամ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայում կշարունակեն զբաղվել հայկական ֆուտբոլի վերելքով»:

ԺԱՄԱՆՑ

# Քնած ժամանակ ընդունած դիրքը «մատնում» է մարդկանց

## Անգլիացի հոգեբանները մի բան են ասում, հայ հոգեբանը՝ լրիվ այլ

Մարդկանց քնած դիրքը «մատնում» է նրանց հոգեվիճակը, խոսում այն մասին, թե ինչ տիպի անձնավորություն է քնածը: Մարդիկ տարբեր են, մեկը սիրում է իշխել, մյուսը՝ հնազանդվել, մեկը վախկոտ է, մյուսը՝ քաջ եւ այլն: Իսկ ավելի կոնկրետ՝ քանի որ քնի ժամանակ մարմնի շարժումները չգիտակցված են ու մարդը չի կարող դրանք կառավարել, հետեւաբար նայելով դիմացինի քնած դիրքին՝ կարելի է որոշակի տվյալներ իմանալ նրա մասին: Այսպիսի հետաքրքիր հետազոտութուն են անցկացրել անգլիացի հոգեբանները՝ մարդկանց քնած դիրքերին տալով անվանումներ ու բացատրություններ:

Էմբրիոնալ. այսպիսի դիրք են ընդունում այն մարդիկ, ովքեր կարիք ունեն պաշտպանության, նրանք բնազդաբար փորձում են պաշտպանել իրենք իրենց՝ կորանալով որքան հնարավոր է՝ դառնալով խխունջանման: Դա նաեւ վկայում է նրանց տագնապայնության բարձր ցուցանիշի մասին:

Ըստ հետազոտողների՝ կիսաէմբրիոնալ դիրքը վերը նշվածից տարբերվում է մարմնի մի փոքր թուլացածությամբ: Ոտքերը այդքան էլ լարված չեն լինում, եւ մարմինը ավելի հանգիստ վիճակում է լինում: Կիսաէմբրիոն վիճակում քնելը նորմալ է: Յուրաքանչյուրին էլ բնորոշ է պաշտպանություն փնտրելը, բայց դրա հետ մեկտեղ, այս դիրքով քնած մարդը չի վախենում, հավասարակշռված է, օբյեկտիվ եւ ունակ հաղթահարելու բոլոր խնդիրները:



Փորի վրա քնել նախընտրող մարդը փորձում է կառավարել ամեն ինչ եւ ամենքին: Նա կարծես իր մարմնով ծածկում է ողջ տարածքը՝ փորձելով այն գրավել: Այսպիսի մարդիկ ակտիվ են, փոքր-ինչ ագրեսիվ եւ իշխանասեր: Մեջքի վրա. սա էլ ամենաթուլացած դիրքն է: Սովորաբար շատ քչերն են կարողանում այս դիրքով քնել: Այս դիրքը հուշում է այն մասին, որ անձը իրեն զգում է հարմարավետ, վստահ, որ իրեն բացարձակ ոչինչ չի անհանգստացնում: Կամ՝ վկայում է այն մասին, որ տվյալ մարդը անպատասխանատու է եւ ամենեւին ունակ չէ սեփական խնդիրները ինքնուրույն լուծել:

Իսկ թե ինչ կարծիքի են հայերն անգլիացիների հետազոտության մասին, «Առավոտը» փորձեց պարզել հոգեբան Լիլիթ Սարգսյանից:

Ըստ հոգեբանի՝ քնած դիրքով որոշել, թե ինչպիսի անձնավորություն է մարդը՝ ճիշտ չէ. «Միշտ չէ, որ մարդիկ նույն դիրքով են քնում: Ժամանակի ընթացքում, ինչպես մնացած այլ սովորությունները, քնելու դիրքը նույնպես կարող է փոխվել: Բացի այդ՝ մարդը բնակության վայրը, իր ննջասենյակն ու անկողինը փոխելու հետ զուգահեռ՝ անհնար է, որ չփոխի քնելու դիրքը, դա անկախ իրենից էլ կստացվի: Ինչ վերաբերում է նրան, թե, օրինակ, փորի վրա քնել նախընտրողները փորձում են կառավարել ամեն ինչ եւ ամենքին, կամ որ մեջքի վրա քնողները անպատասխանատու մարդիկ են, այդպես չէ. ինչպես փորի վրա քնել նախընտրողները, այնպես էլ այլ դիրքերով քնող մարդիկ կարող են լինել անպատասխանատու, ուժեղ, ինքնուրույն եւ այլն»:

Լ. Սարգսյանի ձեւակերպմամբ՝ ընդհանրապես մարդու քնած ժամանակ ընդունած դիրքը կախված է օրվա ընթացքում ու անկողին մտնելու պահին ունեցած նրա տրամադրությունից: «Սովորաբար ընկճված վիճակում պառկելիս անկախ քեզանից կծկվում ես, ընդունում վերը նշված էմբրիոնալ դիրքը, բայց դա չի նշանակում, որ դու մշտապես պաշտպանության կարիք ունեցող անձնավորություն ես: Ուրախ, բարձր տրամադրություն ունեցող մարդիկ իրենց ավելի ազատ են զգում անկողնում, հնարավոր է, որ անընդհատ շուռումուռ գան, բայց դա չպետք է դիտվի որպես անհանգիստ քուն»,- մեկնաբանում է Լ. Սարգսյանը: Նա հավելում է, որ քնելիս չպետք է կենտրոնանալ դիրքերի վրա, այլ քնել այնպես, ինչպես ձեզ թեթեւ կզգաք:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ